

ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՁԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇ/ 9-Ի բազա/

1. Որտեղի՞ց է սկսվում մարդու արյան շրջանառության փոքր շրջանը.

1/ աջ փորոքից

2/ ձախ փորոքից

3/ աջ նախասրտից

4/ ձախ նախասրտից

2. Մարդու ներշնչման ժամանակ քթի խոռոչից անմիջապես ու՞ր է անցնում օդը.

1/ կոկորդ

2/ քթնմասն

3/ շնչափող

4/ բրոնխներ

3. Մարդու ո՞ր օրգանի կառուցվածքային և գործառական միավորն է նեֆրոնը.

1/ երիկամի

2/ լյարդի

3/ սրտի

4/ թոքի

4. Ո՞ր գործառույթն է իրականացնում ռիբոսոմը.

1/ ածխաջրերի ճեղքավորում

2/ սպիտակուցի կենսասինթեզ

3/ ԱԵՖ-ի կենսասինթեզ

4/ ճարպերի փոխադրում

5. Բջջում որտե՞ղ են առաջանում լիզոսոմները.

1/ կորիզակում

2/ ռիբոսոմներում

3/ Գոլջիի ապարատում

4/ բջջային կենտրոնում

6. Ի՞նչ է տեղի ունենում միթոզի թելոֆազում.

1/ կորիզակների տարալուծում

2/ կորիզաթաղանթի ձևավորում

3/ ցենտրիոլների իրարից հեռացում

4/ քրոմատիդների տարամիտում դեպի բջջի բևեռները

7. Ի՞նչն է բնորոշ քրոմոսոմային մուտացիաներին.

1/ քրոմոսոմների կառուցվածքի փոփոխումը

2/ ԴՆԹ-ում երկու նուկլեոտիդների փոփոխումը

3/ քրոմոսոմների հապլոիդ քանակի բազմապատիկ անգամ մեծացումը

4/ մեկ գենի սահմաններում մեկ նուկլեոտիդի փոփոխությունը

8. Արյան ռ՞ր խումբն ունեցող մարդիկ են համարվում համընդհանուր դոնորներ.

1/ առաջին

2/ երկրորդ

3/ երրորդ

4/ չորրորդ

9. Ո՞ր վիտամինի անբավարարության դեպքում է առաջանում լնդախտ/ ցինգա/ հիվանդությունը.

1/ B₁

2/ D

3/ A

4/ C

10. Միջավայրի ցածր ջերմաստիճանի պայմաններում ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում.

1/ ջերմատվությունը փոքրանում է

2/ քրտնարտադրությունն ուժեղանում է

3/ մաշկի արյունատար անոթները լայնանում են

4/ արյան քանակը մաշկի արյունատար անոթներում մեծանում է

11. Որո՞նք են նախակորիզավորները.

1/ սնկերը

2/ ծածկասերմերը

3/ բակտերիաները

4/ նախակենդանիները

12. Կորիզավոր բջջում որտե՞ղ է իրականանում ԱԵՖ-ի սինթեզը.

1/ բջջակորիզում

2/ ռիբոսոմներում

3/ միտոքոնդրիումներում

4/ կորիզակում

13. Ո՞ր կառույցն է կազմված ցենտրիոլներից.

1/ բջջային կենտրոնը

2/ բջջակորիզը

3/ քրոմոսոմը

4/ կորիզաթաղանթը

14. Ո՞ր օրգանիզմներն են ավտոտրոֆ.

1/ մակաբույծ սնկերը

2/ ջրային կաթնասունները

3/ գիշատիչ թռչունները

4/ կանաչ բույսերը

15. Նշվածներից ո՞րն անսեռ բազմացման տարբերակ չէ.

1. սպորառաջացում

2/ բողբոջում

3/ վեգետատիվ բազմացում

4/ կուսածնություն

16. Ի՞նչն է բնորոշ ոչ ժառանգական / ֆենոտիպային/ փոփոխականությանը.

1/ փոփոխությունները չեն փոխանցվում սերունդներին

2/ դիտվում են թվաքանակի փոփոխություններ

3/ փոփոխությունները կապված են գենոտիպի հետ

4/ փոփոխությունները ժառանգվում են սեռական բազմացման միջոցով

17. Ի՞նչն է բնորոշ գենային մուտացիաներին.

1/ քրոմոսոմների կառուցվածքի փոփոխումը

2/ քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմի ոչ բազմապատիկ փոփոխումը

3/ ԴՆԹ-ում մեկ նուկլեոտիդի փոփոխումը

4/ քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմի բազմապատիկ փոփոխումը

18. Որտե՞ղ են տեղակայված մարդու տեսողական ընկալիչները.

1/ եղջերաթաղանթում

2/ անոթաթաղանթում

3/ ցանցաթաղանթում

4/ ակնաբյուրեղում

19. Չափահաս հասակում մարդու ո՞ր գեղձի գերգործառույթի հետևանքով է զարգանում

ակրոմեգալիա հիվանդությունը.

1/ մակերիկամի

2/ ենթաստամոքսային գեղձի

3/ մակուղեղի

4/ վահանագեղձի

20. Մարդու ո՞ր մկաններն են առավել դանդաղ կծկվում և ուշ հոգնում.

1/ իրանի

2/ ստորին վերջույթների

3/ աղիների պատերի

4/ վերին վերջույթների

21. Սովորաբար ի՞նչ չի պարունակում առողջ մարդու երկրորդային մեզը.

1/ միզանյութ

2/ սպիտակուց

3/ միզաթթու

4/ ջուր

22. Ո՞ր օրգանը չի մասնակցում նյութափոխանակության արգասիքների և վնասակար

նյութերի արտազատմանը մարդու օրգանիզմից.

1/ երիկամ

2/ լյարդ

3/ մակերիկամ

4/ թոք

23. Ի՞նչ է տեղի ունենում ներշնչման ժամանակ.

1/ կողոսկրերի իջեցում

2/ միջկողային մկանների կծկում

3/ ստոծանու մկանների թուլացում

4/ կրծքավանդակի ծավալի փոքրացում

24. Ի՞նչն է բնորոշ վեգետատիվ նյարդային համակարգին.

1/ կարգավորում է միջաձիգ գոլավոր մկանների աշխատանքը

2/ իրականացնում է օրգանիզմի կապը միջավայրի հետ

3/ կարգավորում է հարթ մկանների աշխատանքը

4/ իրականացնում է մարդու կամքից կախված շարժումները

25. Ինչե՞րն են անմիջապես մասնակցում տրանսլյացիայի գործընթացին.

1/ փ-ՌՆԹ-ն և ԴՆԹ-ն

2/ ԴՆԹ-ն և ի-ՌՆԹ-ն

3/ ԴՆԹ-ն և ռիբոսոմները

4/ ի-ՌՆԹ-ն , փ-ՌՆԹ-ն և ռիբոսոմները

26. Ի՞նչ է առաջանում տրոհման արդյունքում.

1/ առանցքային օրգաններ

2/ երկու սաղմնային թերթիկներ

3/ գաստրուլա

4/ բլաստուլա

27. Հետևյալ ածխաջրերից ո՞րն է պոլիմեր.

1/ դեզօքսիռիբոզը

2/ ռիբոզը

3/ գլյուկոզը

4/ գլիկոգենը

28. Քանի՞ ողերից է բաղկացած մարդու ողնաշարի գոտկային բաժինը.

1/ յոթ

2/ հինգ

3/ տասներկու

4/ տասնհինգ

29. Մարդու կնի-ի ո՞ր բաժինն է վերահսկում ջերմակարգավորումը, ծարավի և քաղցի զգացումը.

1/ ենթատեսաթումբը

2/ տեսաթումբը

3/ կամուրջը

4/ երկարավուն ուղեղը

30. Մարդու ո՞ր հատկանիշները ընդհանրապես կախված չեն արտաքին պայմանների ազդեցությունից.

1/ մաշկի գույնը և մարմնի զանգվածը

2/ աշխատանքային հմտությունները և մարմնի զանգվածը

3/ տարիքը և ֆիզիկական պատրաստվածությունը

4/ արյան խումբը և աչքերի գույնը

31. Մարդու մաշկում ո՞ր ընկալիչները կան .

1/ լսողական

2/ հոտազգաց

3/ գունազգաց

4/ շոշափական

32. Ի՞նչ ատամներ են տեղակայված յուրաքանչյուր ծնոտում.

1/ 4 կտրիչներ, 2 ժանիքներ, 4 փոքր և 6 մեծ աղորիքներ

2/ 2 կտրիչներ, 4 ժանիքներ, 2 փոքր և 6 մեծ աղորիքներ

3/ 4 կտրիչներ, 1 ժանիք, 4 փոքր և 8 մեծ աղորիքներ

4/ 2 կտրիչներ, 2 ժանիքներ, 6 փոքր և 4 մեծ աղորիքներ

33. Մարդու երիկամների վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

1/ տեղակայված են որովայնի խոռոչում

2/ լորաձև են, կենսո են

3/ ունեն կեղևային և միջուկային շերտեր

4/ յուրաքանչյուր երիկամում կա մինչև մեկ միլիոն նեֆրոն

34. Ո՞ր կենսաբանական պոլիմերի մոնոմերն է ամինաթթուն

.

1/ նուկլեինաթթվի

2/ սպիտակուցի

3/ գլիկոզենի

4/ օսլայի

35. Մեկ մոլեկուլ գլյուկոզի անթթվածին ճեղքման արդյունքում քանի՞

մոլեկուլ կաթնաթթու է առաջանում.

1/ 2

2/ 6

3/ 36

4/ 44

36. Ի՞նչ տեղի չի ունենում արտաշնչման ժամանակ.

1/ միջկողային մկանների կծկում

2/ կողոսկրերի իջեցում

3/ ստոծանու մկանների թուլացում

4/ կրծքավանդակի խոռոչի փոքրացում

37. Սաղմնային ո՞ր թերթիկից է զարգանում ատամների էմալը.

1/ Էկտոդերմից

2/ Էնտոդերմից

3/ մեզոդերմից

4/ Էկտոդերմից և Էնտոդերմից

38. Ինչպե՞ս է անվանել Գ. Մենդելը հիբրիդային առանձնյակի մոտ ծնողական

ձևերից մեկի հատկանիշի գերակշռման երևույթը.

1/ հոմոզիգոտություն

2/ հետերոզիգոտություն

3/ դոմինանտություն

4/ համակցություն

39. Ինչպե՞ս են անվանում առանձնյակներին , որոնք առաջացնում են տարբեր

տեսակի գամետներ և որոնց սերնդում նկատվում է ճեղքավորում.

1/ ռեցեսիվ

2/ դոմինանտ

3/ հոմոզիգոտ

4/ հետերոզիգոտ

40. Ֆոտոսինթեզի լուսային փուլում ինչե՞ր են առաջանում.

1/ ածխաջրեր

2/ մուլեկուլային թթվածին և ածխաջրեր

3/ ածխաջրեր, ատոմային ջրածին և ԱԵՖ

4/ մուլեկուլային թթվածին, ԱԵՖ, ատոմային ջրածին

41. Ո՞ր շարքում են նշված մարդու միայն ստորին ազատ վերջույթների կմախքի ոսկրերը.

1/ բազկոսկր, նախաբազուկ, ոտնաթաթի ոսկրեր

2/ ազդրոսկր, անրակ, ճաճանչոսկր, ոտնաթաթի ոսկրեր

3/ ճաճանչոսկր, ոտնաթաթի ոսկրեր, ազդրոսկր, սրունքոսկր

4/ ազդրոսկր, սրունքի մեծ և փոքր ոլոքներ, ոտնաթաթի ոսկրեր

42. Մարդու օրգանիզմում որտե՞ղ են գտնվում զգայական նեյրոնների մարմինները.

1/ տեսաթմբում

2/ ողնուղեղից դուրս ողնուղեղային հանգույցներում

3/ ողնուղեղի կողմնային եղջուրներում

4/ ողնուղեղի գորշ նյութի հետևի եղջուրներում

43. Ինչո՞վ է մարդու կրծքավանդակը բաժանվում որովայնի խոռոչից.

1/ ստամոքսով

2/ լյարդով

3/ ստոծանիով

4/ թոքամզով

44. Մարդու օրգանիզմում ո՞րն է հյուսվածքային հեղուկի գործառույթը.

- 1/ ավշային մազանոթների առաջացում
- 2/ մասնակցություն արյան մակարդմանը
- 3/ օքսիհեմոգլոբինի առաջացում
- 4/ արյան և բջիջների միջև կապի ստեղծում

45. Ո՞ր նյութի սինթեզը չի իրականացնում լյարդը.

- 1/ ֆիբրինի
- 2/ լեդու
- 3/ հեպարինի
- 4/ գլիկոգենի

46. Մարդու ստամոքսում ի՞նչն է ոչնչացնում մանրէներին.

- 1/ լորձը
- 2/ լեդին
- 3/ աղաթթուն
- 4/ լիզոցիմը

47. Ինչպիսի՞ ծնողական ձևեր էր վերցնում Գ. Մենդելը միահիբրիդային

խաչասերման համար.

- 1/ մեկ զույգ նման հատկանիշով
- 2/ մեկ զույգ հատկանիշով տարբերվող
- 3/ երկու զույգ հատկանիշներով տարբերվող
- 4/ երկու զույգ նման հատկանիշներով

48. Որո՞նք են կյանքի ոչ բջջային ձևերը.

- 1/ վիրուսները

2/ բակտերիաները

3/ ջրիմուռները

4/ բույսերը

49. Որքա՞ն է հանգիստ պայմաններում մեկ րոպեում շնչառական շարժումների քանակը.

1/ 1-2

2/ 12-20

3/ 35-145

4/ 360-500

50. Որո՞նք են ՁԻԱՀ, գրիպ, կարմրուկ հիվանդությունների հարուցիչները.

1/ նախակենդանիները

2/ բակտերիաները

3/ վիրուսները

4/ սնկերը